ՄԱՄՈՒԼԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920 ԹԹ.)

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ. Կ.

Հայաստանի նորագույն պատմության կարևոր հիմնախնդիրներից է Հայաստանի առաջին հանրապետության օրոք մամուլի նկատմամբ պետական վերահսկողության և գրաքննության հարցի ուսումնասիրությունը: Այդուհանդերձ, այս խնդրին, որպես առանձին ուսումնասիրության թեմա, մասնագետները չեն անդրադարձել:

Ցարական Ռուսաստանի տիրապետության օրոք, ինչպես կայսրության մյուս տարածքներում, այնպես էլ Անդրկովկասում և մասնա վորապես Արևելյան Հայաստանում մեծ ծավալներ էին ընդունել մամուլի նկատմամբ պետական վերահսկողությունն ու գրաքննությունը: Ցարական շրջանի հայկական մամուլի նկատմամբ գրաքննության մասին խորհրդային տարիներին գրվել են արժեքավոր աշխատություններ[1]: Հայկական պատմագիտության համար ուսումնասիրության նյութ էր նաև արևմտահայության շրջանում օսմանյան իշխանությունների իրականացրած գրաքննությունը[2]:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ռուսաստանը մեծ քայլ կատարեց դեպի ժողովրդավարական արժեքներ և քաղաքացիական ազատություններ, հայտարարվեց խոսքի, մամուլի, միություններ կազմելու, հավաքների, գործադուլների ազատության մասին: Համառուսաստանյան Ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլի 27-ին հատուկ որոշում ընդունեց՝ «Մամուլի մասին»: Որոշման առաջին հոդվածում հստակ արձանագրվում էր. «Մամուլը և տպագրական արտադրանքի վաճառքն ազատ են: Նրանց նկատմամբ վարչական արգելքների կիրառումն անթույլատրելի է»: Նոր պարբերական հրատարակելու համար անհրաժեշտ էր լինելու երկու օրինակով դիմում ներկայացնել Ժամանակավոր կառավարության տեղական կոմիսարին կամ համապատասխան լիազորված անձին[3]: «Մամուլի մասին» որոշման հետ մեկտեղ՝ նույն օրը Ժամանակավոր կառավարությունն առանձին որոշում ընդունեց «Մամուլի գործերով

---

[1] **Арешян С. Г.** *Армянская печать и царская цензура, Е., 1957,* **Մխիթարյան Մ. Հ.,** *XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Ե., 1976 և այլն:*

[2] **Խառատյան Ա. Ա.,** *Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., 1989:*

[3] *Сборник указов и постановлений Временного правительства, вып. N 1 (27 февраля — 5 мая 1917 г.), Пг., 1917, с. 212-215.*

հաստատությունների մասին»: Ըստ այդմ՝ դադարեցին գործելուց Մամուլի գործերի գլխավոր վարչությունը, Արտասահմանյան գրաքննության կոմիտեն, գրաքննու-թյան տեղական բոլոր մարմիններն ու տպարանների տեսուչները, նաև Պետական հրատարակչական կոմիտեն: Լուծարվող նշյալ հաստատություններին փոխարինեց նորաստեղծ Գրապալատը, որի գործառույթն էր ողջ Ռուսաստանում հրատարակվող պարբերա-կանների, գրքերի և, ընդհանրապես, ամբողջ տպագրական արտա-դրանքից օրինակների հավաքումն ու հաշվառումը: Ժամանակավոր կառավարության տեղական կոմիսարների պարտականություններից էին տպարանների, պարբերական և ոչ պարբերական հրատարակու-թյունների հաշվառումը, դրանք կենտրոնական գրապահոց ուղարկելը, նաև տպագրական հաստատությունների աշխատանքին հետևելը, որպեսզի վերջինները կատարեն օրենքի պահանջները[4]:

Սա աննախադեպ իրադարձություն էր նախկին կայսրության ժողովուրդների համար: Ռուսաստանյան պետության ողջ տարածքում (այդ թվում՝ Անդրկովկասում), չնայած պատերազմական դժվարու-թյուններին, սկսեցին ազատորեն տպագրվել քաղաքական կուսակ-ցությունների, տարբեր խմբակցությունների և միությունների պարբե-րականները (բացառությամբ միապետական ուղղվածության թերթերի): Թեև Ժամանակավոր կառավարության 1917 թ. հուլիսյան ճգնաժամից հետո մամուլի նկատմամբ որոշ խստացումներ եղան, այդուհանդերձ, դրանք անհամեմատելի էին ցարական ժամանակների հետ: Վերը թվարկված ազատական որոշումներն Անդրկովկասում գործադրվեցին նաև 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած շրջանում՝ ընդհուպ 1918 թ. մայիսին Անդրկովկասյան Դեմոկրատական Դաշնային Հանրապետության լուծարումը:

1918 թ. մայիսին անկախացած Հայաստանի Հանրապետությունում ևս կիրառվեցին մամուլի մասին Ժամանակավոր կառավարության որոշումները: 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհրդի հաստա-տած օրենքի համաձայն՝ ՀՀ տարածքում ժամանակավոր գործելու էին նախկին Ռուսական կայսրության օրենք-ները՝ Ժամանակավոր կառավա-րության, Անդրկովկասյան կոմիսարիատի ու սեյմի և Հայաստանի խոր-հրդի փոփոխություններով ու լրացումներով[5]: ՀՀ-ի գոյության երկուսու-կես տարիների ընթացքում այդպես էլ նշյալ ոլորտները կանոնակարգող օրենքներ չընդունվեցին, թեև մի քանի անգամ խնդիրը բարձրացվել է:

Հայաստանի Հանրապետության գոյության առաջին իսկ օրերին կառավարությունը հայտարարեց ժողովրդավարական մոտեցումներ որ-դեգրելու մասին: Այսպես՝ Հայաստանի խորհրդի 1918 թ. օգոստոսի 6-ի նիստում վարչապետ Հովհ. Քաջազնունին հայտարարեց ՀՀ տարածքում

---

[4] *Նույն տեղում, էջ 215-218:*

[5] *Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Ե., 1998, էջ 22:*

դավանանքի, խոսքի և քաղաքացիական մյուս ազատությունների մասին[6]: Հարկ է նշել, որ ՀՀ նորընտիր խորհրդարանի 1919 թ. օգոստոսի 10-ի նիստում իր ղեկավարած կառավարության հայտագիրը ներկայացնող Ալ. Խատիսյանը ևս հատուկ շեշտեց «քաղաքացիական բոլոր ազատությունները» հարգելու մասին[7]: ՀՀ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ կառավարող Հ. Յ. Դաշնակցության պաշտոնաթերթ «Զանգ»-ի խմբագրականում ևս նշվում էր խոսքի ազատությունը չսահմանափակելու մասին[8]: Այդուհանդերձ, ինչպես կտեսնենք, ՀՀ իշխանություններն ու իշխող կուսակցությունը միշտ չէ, որ հետևում էին ստանձնած պարտավորություններին:

Հայաստանի առաջին հանրապետության կարճատև գոյության շրջանում հրատարակվել է շուրջ վեց տասնյակ պարբերական (թերթեր, ամսագրեր): Դրանց զգալի մասը մեկ կամ մի քանի համար հրատարակվելուց հետո փակվել է ֆինանսական խնդիրների պատճառով, կամ էլ ՀՀ իշխանությունների հրահանգով[9]:

Հայաստանի Հանրապետության օրոք մամուլը և, ընդհանրապես, հրատարակչական բնագավառը գտնվում էր ներքին գործերի նախարարության իրավասության ներքո: ՀՀ կառավարության անունից ՆԳՆ-ն էր հարաբերություններ պահպանում տպարանների և թերթերի խմբագրությունների հետ, հրահանգներ տալիս նրանց, թույլատրում կամ կասեցնում մամուլի միջոցի հրատարակությունը, գրքերի տարածումը: Մամուլին առնչվող խնդիրները կանոնակարգելու, անհրաժեշտ հրահանգներ տալու նպատակով նախարարությունը պարբերաբար թերթերի խմբագիրների մասնակցությամբ խորհրդակցություններ էր կազմակերպում[10]: Հանրապետության անկախության առաջին ամիսներին (ընդհուպ 1919 թ. գարունը) մամուլի նկատմամբ պետության կողմից վերահսկողության և գրաքննության ակնառու փաստեր մեզ հայտնի չեն: Սովի և զանգվածային մահացության այդ շրջանում ՀՀ իշխանությունները նման հարցերի ուշադրություն դարձնելու ժամանակ չունեին: Իրադրությունը փոխվեց երկրի ներքին իրավիճակի կայունացմանը զուգընթաց և հատկապես 1919 թ. հունիսի 21-23-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախօրեին, երբ քաղաքական կուսակցությունների միջև ակտիվ պայքար սկսվեց:

---

[6] Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Ե., 2009, էջ 16:

[7] Նույն տեղում, էջ 590:

[8] Զանգ, Ե., 4.IV.1919, N 38:

[9] **Հակոբյան Ա.,** Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Ե., 2005, էջ 3-4:

[10] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 131, 137, Հառաջ, Ե., 3.X.1920, N 215, Ժողովուրդ, Ե., 28.XI.1920, N 196:

Արխիվային փաստաթղթերի և մամուլի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում մամուլի նախնական գրաքննություն չէր իրականացվում: Ճիշտ է, 1919 թ. երկրորդ կեսից զինվորական նախարարությունն ուներ ռազմական գրաքննիչ, որի խնդիրն էր մամուլում ռազմական գաղտնիքների տպագրումը վերահսկելն ու արգելելը, այդուհանդերձ, վերջինի լիազորությունները սահմանափակ էին, քանի որ նա թերթերի խմբագրությունների վրա ազդելու իրական լծակներ չուներ: Խմբագրություններն անտեսում էին բանակին առնչվող նյութերը մինչև հրատարակելը ռազմական գրաքննիչին ներկայացնելու առաջարկը: Նրան մնում էր արձագանքել արդեն տպագրված հոդվածներին[11]: Փաստորեն, ՀՀ-ում կարող ենք վերապահությամբ խոսել միայն հետգրաքննության մասին:

Ուսումնասիրության արդյունքներն ընդհանրացնելով՝ կարող ենք արձանագրել, որ մամուլում տպագրված նյութերը «խնդիրներ են առաջացրել» երկու դեպքում. երբ պետական կամ ռազմական գաղտնիք են բացահայտել կամ էլ քաղաքական տեսակետից անցանկալի են եղել ՀՀ իշխանությունների կամ Անտանտի ներկայացուցիչների համար:

Պետական կամ ռազմական գաղտնիք պարունակելու համար ՀՀ ներքին գործերի նախարարության «ուշադրությունը գրաված» մեզ հայտնի առաջին օրինակը «Գերագույն կոմիսար գնդ. Հասկելի առաջարկը Հայաստանի կառավարությանը» փաստաթղթի հրատարակումն էր Հայ ժողովրդական կուսակցության «Ժողովուրդ» թերթի 1919 թ. սեպտեմբերի 9-ի համարում: Հայաստանում դաշնակից երկրների գերագույն հանձնակատար, ամերիկյան բանակի գնդապետ Ուիլյամ Հասկելը Հայաստանին և Ադրբեջանին առաջարկել էր Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներից չեզոք գոտի ստեղծել՝ ամերիկացի գեներալ-նահանգապետի ենթակայության ներքո: ՀՀ կառավարության առջև պահանջ դնելով գործադրել իր ամբողջ ազդեցությունը՝ «հանգստացնելու համար հայ ազգաբնակչությանը չեզոք շրջանում և Զանգեզուրում»՝ Հասկելը ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանից պահանջել էր անմիջապես ստորագրել իր ուղարկած համաձայնագիրը[12]:

Հասկելի առաջարկը քննարկվել է Հայաստանի խորհրդարանի փակ նիստում, քանի որ հանրապետության իշխանությունները խուսափում էին ոչ ցանկալի թվացող այդ առաջարկի հանրայնացումից: Այդ պատճառով ներքին գործերի նախարարությունը «Ժողովուրդ»-ի խմբագրությունից պահանջել էր շտապ հայտնել, թե որտեղից են ստացել այդ տեղեկությունը[13]: Հայաստանի խորհրդարանի սեպտեմբերի 19-ի նիստում

---

[11] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 58 շրջ.:

[12] Ժողովուրդ, 9 սեպտեմբերի 1919, N 100: Հասկելի առաջարկներն արտատպված են «Սոցիալիստ հեղափոխական» թերթի 1919 թ. սեպտեմբերի 12-ի համարում:

[13] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 125:

ՆԳ նախարար Աբրահամ Գյուլխանդանյանը նշեց, որ ոչ թե գաղտնիք է Հասկելի նամակը, այլ վերջինի մասին պառլամենտի որոշումը (այն թերթում տպա-գրված չէր): «Ուստի մենք պատասխանատվության չենք ենթարկում ո՛չ թերթին և ո՛չ էլ խմբագրին», - ավելացրեց նախարարը: Նա փորձեց ցրել պատգամավորների մտավախությունը թերթը փակված լինելու մասին[14]: Այս հավաստիացումը, ինչպես հետո կտեսնենք, իրականությանը չէր համապատասխանում:

ՀՀ զինվորական հրամանատարությանն անհանգստացրեց հայ մասնագետների կողմից Ալեքսանդրապոլում երկու գրահագնացք («Ազատամարտ» և «Վարդան Զորավար») կառուցելու մասին տեղեկատվության հրատարակումը Ալեքսանդրապոլի «Շիրակի աշխատավոր» թերթի 1919 թ. N 66-ում: Այն արտատպված էր Թիֆլիսի «Նոր աշխատավոր» թերթից[15]: Ուշագրավ է, որ աղմուկ հանած այս տեղեկատվությունը թերթում տպագրվել էր «Հեռագիրներ (Հայաստանի հեռ. գործ.)» խորագրի ներքո: Այսինքն՝ Հայաստանի հեռագրական գործակալությունն է գրահագնացքների կառուցման մասին անզգուշաբար տեղեկատվություն տարածել: Հոկտեմբերի 10-ին ՀՀ զինվորական նախարար Խաչատուր Արարատյանը ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանին առաջարկեց համապատասխան կարգադրություն անել թերթերի խմբագրություններին ու տպարաններին՝ ռազմական գաղտնիք պարունակող տեղեկություններ տպագրելու անթույլատրելիության մասին, նաև քննարկել «Մամուլի մասին» օրենք ընդունելու անհրաժեշտության հարցը: Զինվորական նախարարի առաջարկների համար հիմք էին հանդիսացել Ալեքսանդրապոլի կայազորի հրամանատար, գեներալ-մայոր Պավել Խաչատրյանի սեպտեմբերի 28-ի, ինչպես նաև նախարարության ռազմական ժամանակների պաշտոնյայի հոկտեմբերի 8-ի զեկուցագրերը[16]: Այդուհանդերձ, ՀՀ իշխանությունները «Մամուլի մասին» օրենք ընդունելուն միտված գործնական քայլեր չկատարեցին:

Զինվորականների խորին դժգոհությունը հարուցեցին նաև Սուրմալուի 1919 թ. սեպտեմբերյան ողբերգական դեպքերի մասին մամուլում տպագրված նյութերը: Ասվածը վերաբերում է ինչպես ընդդիմադիր էսէռների «Սոցիալիստ հեղափոխական» թերթում, այնպես էլ ՀՅԴ պաշտոնաթերթ «Հառաջ»-ում տպագրված հոդվածներին:

Մասնավորապես «Սոցիալիստ հեղափոխական» թերթում ՀՀ պառլամենտի անդամ, ճանաչված էսէռ Արշամ Խոնդկարյանի հրատարակած «Սուրմալուի ողբերգությունը» հոդվածում քննա-դատվում էին կենտրոնական և տեղական իշխանությունների անտարբերությունը և գավառի տարածքում տեղակայված զորամասերի ոչ ռազմունակությունը:

---

[14] Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., էջ 272:

[15] Նոր աշխատավոր, Թիֆլիս, 12.IX.1919, N 189:

[16] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 147-151, **Հակոբյան Ա.,** նշվ. աշխ., էջ 7:

Ա. Խոնդկարյանը հոդվածն ավարտում էր հետևյալ խոսքերով. «Եվ պետք է գործե պետականության գայիսոնը՝ տիրաբար և անխնա, որ նրա հարվածների տակ պետք է թավալգլոր ընկնեն բոլոր հանցապարտները՝ մեծից մինչև փոքրը»[17]:

Ռազմական գրաքննիչի եզրակացության հիման վրա, թե նշյալ հոդվածի համար անհրաժեշտ է պատասխանատվության ենթարկել թերթի խմբագրությանը, նաև համարելով, որ հոդվածում առկա տեղեկությունները հնարավոր է՝ կօգտագործի օտարերկրյա հետախուզությունը, ՀՀ զինվորական նախարար Խ. Արարատյանը ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանին առաջարկեց թերթի խմբագրությանը զգուշացնել նման հոդվածներ տպագրելու անթույլատրելիության մասին[18]: ՆԳ նախարարի կարգադրությամբ թերթի խմբագրությանը գրավոր նախազգուշացում արվեց զորքի և նրա հրամանատարների համար վիրավորական, նաև զինվորական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն հրապարակելու համար: Տեղեկացվում էր, որ զորքի քանակի, տեղաբաշխման, տեղափոխության, զինամթերքի, զորամասերի դրության, զինվորականների համար վիրավորական տեղեկություններ տպագրելու դեպքում թերթը կփակվի: Նախարարության եզրակացության մեջ նշվում էր, որ Ժամանակավոր կառավարության օրենսդրության հիման վրա հոդվածագրին կարելի է դատական պատասխանատվության ենթարկել[19]: Նշենք, որ Ա. Խոնդկարյանի դեմ, այնուամենայնիվ, քրեական գործ չհարուցվեց:

ՀՀ ռազմական շտաբը ներքին գործերի նախարարությանը բողոք ներկայացրեց նաև «Հառաջ»-ի երկու համարներում տպագրված «Վերջին կռիվները Իգդիրում» («Վ.» ստորագրությամբ) հոդվածաշարի առթիվ: Այստեղ ևս քննադատվում էին Սուրմալուում գործող հայկական զորամասերի անկազմակերպ դրությունը, հրամանատարների սխալները, ինչը բախտորոշ եղավ շրջանի հայ և եզդի բնակչության համար՝ հանգեցնելով զանգվածային գաղթի դեպի Արարատյան դաշտ[20]: Մեպտեմբերի 27-ին թերթի խմբագրությանն ուղղված ՆԳ նախարարության նախազգուշական գրությունում այս դեպքում ևս նշվում էր, որ հրատարակված հոդվածաշարի բովանդակությունը վիրավորական է զորքի արժանապատվության համար, և անթույլատրելի է զորքի տեղավորման, տեղափոխության, կազմի, քանակի, գործողությունների, նաև զինվորականների արժանապատվությունը վիրավորող տեղեկությունների հրապարակումը: Ի տարբերություն ընդդիմադիր սոցիալիստ-հեղափոխականների պարբերականի՝ իշխող կուսակցության պաշտոնաթերթին ՆԳՆ-ն չէր սպառնում հրատարակության կասեցմամբ, այլ խմբագրությանը միայն առաջարկում

[17] Սոցիալիստ հեղափոխական, Ե., 18.IX.1919, N 19:
[18] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 62, թ. 57-58 շրջ.:
[19] Նույն տեղում, թ. 54-55 շրջ.:
[20] Հառաջ, Ե., 24, 25.IX.1919, N 4, 5:

էր «անել անհրաժեշտ կարգադրություն՝ նման երևույթները չկրկնելու համար»[21]:

Վերը բերված օրինակները պատկերացում են տալիս, թե պետության անվտանգությունն ապահովելու տեսակետից ինչ բնույթի տեղեկատվության հանրայնացման սահմանափակումներ կային Հայաստանի առաջին հանրապետությունում:

«Խնդիրներ առաջացրած» հաջորդ խումբ նյութերը ՀՀ կառավարության կամ Անտանտի ներկայացուցիչների համար ոչ ցանկալի հրապարակումներն էին:

ՀՀ ներքին գործերի նախարարությունը հսկում էր, որ տպարանները հակապետական, քայքայիչ բնույթի կոչեր, թռուցիկներ չտպագրեն: Այդուհանդերձ, միշտ չէ, որ նախազգուշական միջոցառումները հաջողություն էին ունենում: Այս տեսակետից բնորոշ օրինակ է 1919 թ. սեպտեմբերի 9-16-ը Երևանում կայացած Հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարում ընդուն-ված «Քաղաքական մոմենտի մասին» բանաձևը, որտեղ խստորեն քննադատվում էր ՀՀ իշխանությունների ու իշխող կուսակցու-թյան՝ ՀՅԴ-ի, գործունեությունը և պահանջ դրվում ցրել ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը: Բանաձևը թռուցիկի տեսքով բազմացվեց քաղաքի «Լույս» տպարանում (այստեղ էր տպագրվում նաև ՀԺԿ-ի «Ժողովուրդ» թերթը) և տարածվեց՝ դժգոհություն առաջացնելով իշխանությունների շրջանում: ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանի կարգադրությամբ սեպտեմբերի 19-ի առավոտյան խուզարկություն կատարվեց «Ժողովուրդ» թերթի խմբագրատանը, և բռնագրավվեցին Բանաձևի տպագրված օրինակները: Փակվեց նաև «Լույս» տպարանը: Այնուհետև ՆԳ նախարարը հատուկ կարգադրություն արեց տպարանի կառավարչին՝«հակա-պետական գրություններ»չտպելու մասին[22]: Միայն տպարանատիրոջ՝ հակակառավարական նյութեր չտպագրելու մասին պարտավորագրի ստորագրումից հետո տպարանը վերաբացվեց: Սեպտեմբերի 19-23-ը «Ժողովուրդ» թերթը չտպագրվեց[23]:

Սեպտեմբերի 24-ին հրատարակված թերթի երրորդ էջի մի մասը դատարկ էր տպագրվել, ինչպես ցարական ժամանակների մամուլի դեպքում: Այստեղ պետք է լիներ Հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարում ընդունված «Քաղաքական մոմենտի մասին» վերը հիշատակված բանաձևը (միայն խորագիրն է տպագրվել):

Այնուհետև խմբագրական մարմնի հրատարակած «Խուզարկություն «Ժողովուրդի» խմբագրատանը և «Լույս» տպարանի փակումը» խորագրով հոդվածում նշվում էր ՀՀ ներքին գործերի նախարարության՝ խոսքի և մամուլի ազատությունը սահմանափակող գործողությունների մասին:

---

[21] ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 112:

[22] Հայաստանի ձայն, Ե., 22.IX.1919, N 1, ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 113: Տե՛ս նաև՝ **Հակոբյան Ա.,** նշվ. աշխ., էջ 21-22:

[23] Ժողովուրդ, 24, 26.IX.1919, N 104, 105:

Արձանագրելով, որ ՀՀ-ում իրավական տեսակետից նախնական գրաքննություն գոյություն չունի, շեշտվում էր այն հանգամանքը, որ ՆԳՆ-ն տպարանատիրոջից ստորագրություն է վերցրել հակակառավարական նյութեր չտպագրելու մասին: Ըստ այդմ էլ՝ եզրակացվում էր. «Այսպիսով, տպարանատերը դառնում է ցենզոր»[24]: Հասկանալի է, իշխանությունների նման քայլերը հանգեցնում էին ընդդիմադիր մամուլի ինքնուրույնության սահմանափակման: Սա ՀՀ օրոք հրատարակչական բնագավառի բիրտ վերահսկողության աննախադեպ փաստ էր, ինչը հիմնովին հակասում էր այդ կարգադրությունը կատարած կառավարության հայտագրի տառին և ոգուն:

Քաղաքական դրդապատճառներով ՀՀ իշխանությունների ուշադրությունը գրաված և նույնիսկ կառավարության նիստի ընթացքում քննության առարկա դարձած մեզ հայտնի հաջորդ օրինակը Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Հայաստանի կոմիտեի օրգան «Սոցիալիստ հեղափոխական» թերթի 26-րդ համարն էր: Կառավարությունը 1919 թ. հոկտեմբերի 14-ի նիստում լսեց ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանի զեկուցումը թերթի նշյալ համարի բովանդակության վերաբերյալ, որն «ի գիտություն» ընդունվեց: Հոկտեմբերի 16-ին «քննության և տնօրինության» համար ներքին գործերի նախարարությունը թերթի համարն ուղարկեց կառավարություն[25]:

Նման «ուշադրության» պատճառը թերթում տպագրված խմբագրականն ու «Ձեռքերի ճարպկություն» խորագրով հոդվածն էին[26]: Անստորագիր խմբագրականում անդրադարձ էր կատարվում ՀՀ պառլամենտի 1919 թ. հոկտեմբերի 7-ի նիստում Զանգեզուրի մասին Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի հարցապնդմանը: Տեղեկացնելով, որ հավաստի տվյալներ կան, որ Ադրբեջանը պատրաստվում է «հրի ու սրի մատնել» Զանգեզուրը, իսկ Հայաստանի կառավարությունը «ոչ մի ռեալ միջոց չի ձեռնարկել ապա-հովելու այդ գավառի ֆիզիկական գոյությունը», մտահոգություն էր հայտնվում, որ այստեղ էլ կարող է կրկնվել այն ողբերգու-թյունը, «ինչ կատարվեց Նախիջևանի նկատմամբ»: Իսկ «Ձեռքերի ճարպկություն» հոդվածում («Օ.» ստորագրությամբ) քննադատվում, անարգանքի սյունին էր գամվում վարչապետ Ալ. Խատիսյանը: Այդուհանդերձ, չնայած իշխանություններին ու անձամբ վարչապետին ուղղված նման մեղադրանքներին՝ ՀՀ կառավարությունը թերթի նկատմամբ պատժամիջոցներ չկիրառեց:

Էսէռներին առնչվող հաջորդ օրինակը “Знамя труда” թերթի ճակատագիրն էր: ՀՀ ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանի 1920 թ. մարտի 18-ի կարգադրությամբ «հակապետական և հակակառավարական»

---

[24] Նույն տեղում, 24.IX.1919, N 104:

[25] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Ե., 2014, էջ 323, ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 54, թ. 29:

[26] Սոցիալիստ հեղափոխական, 12.X.1919, N 26:

ուղղվածության համար այն փակվեց, իսկ հրատարակված առաջին (նաև՝ միակ) համարը բռնագրավվեց: Հակապետական զանազան կարգախոսների թվում թերթում տեղ էր գտել նաև հետևյալ արտահայտությունը. «Այն հողամասը, որը, չգիտենք ինչու, կոչվում է Հայկական Հանրապետություն…»[27]: Պարբերականի փակման իրավական հիմքերի վերաբերյալ ՀՀ պառլամենտի 1920 թ. ապրիլի 12-ի նիստում Սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունը հարցապնդում ուղղեց արդարադատության նախարար Ռ. Դարբինյանին: Վերջինս իր ելույթում նշեց. «Մի օրգան, եթե փաստորեն չի ճանաչում այն պետությունը, որի սահմաններում լույս է տեսնում, իր գոյությունը շարունակել չի կարող, որովհետև նրա հրատարակվելն իսկ հակապետական երևույթ է[28]«: Եզրակացվում էր, որ հարկ չկա բեկանելու ՆԳ նախարարի կարգադրությունը:

Հակապետական կամ հակակառավարական նյութեր հրատարակելու պատճառով կասեցված մյուս պարբերականները բոլշևիկյան կամ բոլշևիկամետ թերթեր էին: Այսպես՝ Ալեքսանդրապոլի տեղական իշխանությունների կողմից դադարեցվել է ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի օրգան «Ալիք» թերթի տպագրությունը, որի առաջին և միակ համարը լույս է տեսել 1920 թ. հունվարի 11-ին: Պարբերականն արգելվել է հակակառավարական դիրքորոշման, 1919 թ. դեկտեմբերին քաղաքի բոլշևիկների ձերբակալման ու ցույցերի մասին պատմող հոդվածների պատճառով[29]:

1920 թ. մայիսյան հակապետական ապստամբության շրջանում հակակառավարական դիրքորոշման պատճառով արգելվեց մի շարք պարբերականների հրատարակությունը:

Մայիսյան ապստամբության նախօրեին հակապետական և բոլշևիկամետ քարոզչության համար ՀՀ իշխանությունները դադարեցրին էսէռների «Սոցիալիստ հեղափոխական» թերթի հրատարակությունը: 1920 թ. մայիսի 1-ին ձախ ծայրահեղական հայացքների պատճառով իշխանությունները փակեցին 1920 թ. մարտ-ապրիլին Հայաստանի ընդհանուր աշակերտական միության կենտրոնական խորհրդի հրատարակած «Նոր սերունդ» շաբաթաթերթը: 1920 թ. ապրիլին առաջին համարի տպագրումից հետո դադարեցվեց նաև ՌԿ(բ)Կ Երևանի քաղաքային կոմիտեի կողմից անլեգալ հրատարակվող «Կոմունիստ» պարբերականը[30]: Արգելվեց նաև 1920 թ. ապրիլի 19-ից Հայաստանի աշխատավոր գյուղացիական միությունների կողմից օրինական ճանա-

---

[27] Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., էջ 491:

[28] Նույն տեղում, էջ 490:

[29] **Բարսեղյան Խ. Հ.,** Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1920, Ե., 1956, էջ 431-433:

[30] **Բարսեղյան Խ. Հ.,** Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա. 1900-1920, Ե., 1959, էջ 222-223, **Հակոբյան Ա.,** նշվ. աշխ., էջ 46, 56-57:

պարհով Երևանի «Կուլտուրա» տպարանում հրատարակվող «Գյուղացու ձայն» շաբաթաթերթի հրատարակությունը: Այն խմբագրում էին խորհրդարանի անդամ, բոլշևիկամետ Ա. Մելքոնյանը և բոլշևիկ գործիչ Դ. Տեր-Սիմոնյանը: Մայիսի 4-ին ՀՀ կառավարությանն ուղղված գրությամբ ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանը խնդրում էր կարծիք հայտնել «Գյուղացու ձայն» թերթը փակելու վերաբերյալ: Նշվում էր, որ նախարարությունը թերթի ուղղվածությունը համարում է «հակապետական և վնասակար, որը առանձնապես արտահայտվում է նո. 3 առաջնորդողում»՝ կից ուղարկելով թերթի 3 համարները: Մայիսի 7-ին ՀՅԴ Բյուրոյի և ՀՀ իշխանությունների կարգադրությամբ կասեցվում է թերթի 4-րդ համարի տպագրությունը, իսկ խմբագրության երկու աշխատակիցները ձերբակալվում են[31]: Այս գործողություններին գործուն մասնակցություն էր ունեցել Հայաստանի պառլամենտի անդամ, դաշնակցական Ե. Միրաքյանը: Հաջորդ օրը՝ մայիսի 8-ին, ՆԳ նախարարի օգնական Ս. Թորոսյանի կարգադրությամբ վերջինս նշանակվեց Երևանի և Էջմիածնի տպարանների կոմիսար[32]: Փաստորեն, մինչև նշանակումը Ե. Միրաքյանն արդեն տպարանների նկատմամբ հսկողություն էր իրականացնում:

ՀՀ կառավարությունը 1920 թ. սեպտեմբերի 17-ի նիստում քննության առավ Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստների՝ Թիֆլիսում հրատարակվող բոլշևիկամետ «Նոր խոսք» շաբաթաթերթի (հրատարակվել է 1920 թ. օգոստոսի 22-ից մինչև դեկտեմբերի 13-ը) խնդիրը և որոշեց ՆԳՆ-ին հանձնարարել միջոցներ ձեռք առնել արգելելու պարբերականի մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք: Այդ մասին հատուկ հանձնարարական տրվեց ՆԳ նախարար Ռ. Տեր-Մինասյանին[33]:

Հայաստանի Հանրապետության օրոք եզակի չէին Անդրկովկասում անգլիական և ամերիկյան ներկայացուցիչների կողմից հանրապետության ներքին գործերին միջամտելու դեպքերը: Անտանտի երկրների՝ Երևանում գտնվող ներկայացուցչությունները երբեմն բողոքներ էին ուղարկում ՀՀ կառավարություն՝ մամուլում իրենց գործունեությունը կամ ներկայացրած պետությունը քննադատող հոդվածների պատճառով: Իրենց հերթին, ՀՀ իշխանությունները ևս զգուշանում էին մամուլում Դաշնակիցների համար անցանկալի տեղեկատվության հրապարակումից՝ փորձելով սիրաշահել նրանց: Օրինակ՝ Խաղաղարար

---

[31] ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 629, թ. 1, Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը), նյութեր և փաստաթղթեր, Ե., 1932, էջ 400, 425, նաև՝ **Բարսեղյան Խ. Հ.,** Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1920, էջ 439-440: Երիտասարդ սպարտակյան Պ. Պետրոսյանը վկայում է, որ 1920 թ. ապրիլին իրեն և ընկերներին Նոր Բայազետում ձերբակալել են «Գյուղացու ձայն» թերթը գորքի մեջ տարածելու համար (Սպարտակ. 1917-1920, հուշեր և վավերագրեր, Ե., 1935, էջ 133):

[32] ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 151, թ. 2:

[33] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., էջ 554, ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 594, թ. 1:

կոնֆերանսում ՀՀ պատվիրակության անդամ Հ. Օհանջանյանը 1919 թ. օգոստոսի 15-ին Փարիզից գրած նամակում հորդորում էր, որ հայկական թերթերը «հարգանքով խոսեն» գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորած ամերիկյան առաքելության Հայաստան ժամանելու մասին[34]:

Երևանում գտնվող բրիտանական ներկայացուցիչների անվան հետ է կապվում բոլշևիկյան «Խոսք» և «Սպարտակ» թերթերի տպագրության կասեցումը:

1918 թ. սեպտեմբերից մինչև 1919 թ. մարտ Երևանի բոլշևիկները «Կուլտուրա» տպարանում հրատարակում էին «Խոսք» շաբաթաթերթը: Թերթում հրատարակվում էին ՀՀ իշխանություններին և Դաշնակիցներին քննադատող հոդվածներ, բոլշևիկյան քարոզչական նյութեր, նորություններ Ռուսաստանի խորհրդային իշխանությունների գործունեության մասին: Արշ. Մելիքյանի վկայությամբ՝ ՀՀ իշխանությունները թերթի հրատարակությունը դադարեցրել են անգլիացիների պահանջով[35]: Ամենայն հավանականությամբ, անգլիացիների զայրույթի պատճառը թերթի 1919 թ. թիվ 12-ում տպագրված «26 կոմիսարների գնդակահարությունը» խորագրով հոդվածն էր[36]: Հայտնի է, որ բոլշևիկներն այդ ողբերգական դեպքերի համար մեղադրում էին անգլիացիներին:

1919 թ. մայիսմեկյան տոնի առթիվ Երևանի երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպությունն օրինական ճանապարհով ՀՀ ՆԳՆ-ի թույլտվությամբ հրատարակեց «Սպարտակի» առաջին և միակ համարը: Այն տպագրվել էր Երևանի «Կուլտուրա» տպարանում: Թերթում չափազանց շատ էին Անգլիային և մյուս «իմպերիալիստական» տերություններին ուղղված սուր մեղադրանքները: Այսպես՝ նշվում էր, որ Հայաստանի Հանրապետության ներքին կյանքին տոն են տալիս «գիշատիչ իմպերիալիզմի նենգ ներկայացուցիչները»: «Անգլիական իմպերիալիստները» մեղադրվում էին Ստեփան Շահումյանի և իր 25 գործընկերների գնդակահարության համար, իսկ անդրկովկասյան երեք հանրապետությունների կառավարող կուսակցությունները՝ «համաշխարհային իմպերիալիզմին և հիմքից փտած եվրոպական ու ամերիկյան բուրժուազիային» ծառայելու մեջ: ՉընդունելովՀՀ-ի գոյությունը՝ թերթը «հանրապետություն» բառը չակերտների մեջ էր գրում[37]: Ըստ այդմ էլ պատահական չէ, որ «Սպարտակի» լույս տեսնելուց

---

[34] **Բալիկյան Օ., Էվոյան Վ., Սարգսյան Գ.,** *Իմպերիալիստական տերությունների էքսպանսիան Հայաստանում (Բանբեր Հայաստանի արխիվների, 1970, N 3, էջ 92):*

[35] *Սպարտակ. 1917-1920, հուշեր և վավերագրեր, էջ 86, նաև՝* **Բարսեղյան Խ. Հ.,** *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն. 1900-1920, էջ 415-421:*

[36] **Բարսեղյան Խ. Հ.,** *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա. 1900-1920, էջ 180:*

[37] *Սպարտակ, Ե., 1.V.1919, N 1: Հետաքրքրական է, որ թերթում արձանագրված էր, որ ՀՀ-ում թույլ է սոցիալիստական շարժումը:*

հետո Երևանում անգլիական ներկայացուցիչների հրահանգով թերթի հոդվածներն անգլերենի թարգմանվեցին: Այնուհետև նրանց պահանջով ՀՀ իշխանություններն արգելում են «Սպարտակի» հետագա տպագրությունը[38]:

Առկա փաստերի համալիր քննությամբ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության մամուլի համար «տաբու» թեմաներից էր Բաքվի 26 կոմիսարների սպանությանն անգլիացիների մասնակցության հարցին անդրադարձը: Բրիտանական ներ-կայացուցիչները սրտամոտ էին ընդունում այդ մեղադրանքը: Այսպես՝ յոթ ամիս շարունակ բոլշևիկյան քարոզչական նյութեր հրատարակող «Խոսք» թերթը նրանց «ուշադրությանն արժանացավ» միայն այն բանից հետո, երբ հոդված հրատարակեց Ս. Շահումյանի և գործընկերների սպանության մասին: Նույնը կարելի է տեսնել նաև «Սպարտակ» թերթի դեպքում:

Անգլիացիների դժգոհությունը հարուցեց նաև ՀՅԴ-ի «Հայաստանի աշխատավոր» թերթի 1919 թ. սեպտեմբերի 13-ի համարում տպագրված «Անգլիական խաղերը Անդրկովկասում» խորագրով առաջնորդողը: Թերթը փաստում էր, որ հայերի բարեկամի համարում ունեցող անգլիացիները «պոկելով ու զավթելով, բռնի ուժի թելադրությամբ» ՀՀ-ից անջատում են նրա անբաժանելի մասերը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը, Շարուրը, Նախիջևանը, Լոռին ու Ախալքալաքը: Թերթը բրիտանական հրամանատարությանը մեղադրում էր Ադրբեջանին բացահայտ հովանավորելու, թուրք-թաթարական հակահայկական շարժումները խրախուսելու, հայության կոտորածների հանդեպ անտարբեր կեցվածքի համար[39]: Նշյալ խմբագրականի առթիվ վրացական «Ջորջիեն մեյլ» թերթը տպագրեց անգլիացի լրագրող Սկոտլանդ Լիտելի նամակը. վերջինս ՀՀ կառավարությանը քննադատում էր նման բովանդակությամբ նյութի տպագրման համար և հորդորում միջոցներ գործադրել թերթի դեմ, այլապես անգլիացիները կարող են ենթադրել, որ դա նաև կառավարության ու ՀՅԴ կուսակցության մոտեցումն է[40]: «Սոցիալիստ հեղափոխական» թերթի հաղորդման համաձայն՝ հոդվածի առթիվ բրիտանական հրամանատարությունը զգուշացում է արել ՀՀ իշխանություններին[41]: Կարծում ենք, նշված հանգամանքը վճռորոշ նշանակություն է ունեցել «Հայաստանի աշխատավորի» փակման հարցում. թերթի վերջին՝143-րդ համարը լույս տեսավ 1919 թ. սեպտեմբերի 18-ին:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի օրերին ՀՀ կառավարությունը հույսեր էր փայփայում ստանալու Անտանտի երկրների օժանդակությունը, ուստի փորձում էր խուսափել վերջինների պասիվ

---

[38] *Սպարտակ. 1917-1920, հուշեր և վավերագրեր, էջ 86: Տե՛ս նաև՝* ***Բարսեղյան Խ. Հ.,*** *նշվ. աշխ., էջ 422-424:*

[39] *Հայաստանի աշխատավոր, Ե., 13.IX.1919, N 141:*

[40] *Հառաջ, 25.X.1919, N 29:*

[41] *Սոցիալիստ հեղափոխական, 29.X.1919, N 30:*

կեցվածքի հրապարակային քննադատությունից: Նույնիսկ պատերազմի ծանր օրերին, երբ լուրջ վտանգ էր ստեղծված ՀՀ գոյության համար, կառավարությունը խուսափում էր «ամենազոր դաշնակիցներին» «զայրացնելուց»: Չնայած իշխանությունների զգուշավորությանը՝ մամուլում հաճախակի էին հայտնվում Անտանտի տերությունների քաղաքականությունն իրավացիորեն քննադատող հոդվածները:

Դաշնակիցներին սուր կերպով քննադատող հոդվածներից մեկը տպագրվեց ՀՅԴ պաշտոնաթերթ «Հառաջ» օրաթերթում: «Մենք և մեր դաշնակիցները» խորագրով հոդվածում (հոդվածագիրը ստորագրել էր «Դրսեցի» կեղծանունով) նշվում էր, որ իր դաշնակիցների հաղթանակով ավարտված համաշխարհային պատերազմից հետո ևս հայությունը «մնացել է անօգնական, անպաշտպան իր ոխերիմ թշնամիների առաջ՝ կյանքի ու մահվան պայքար մղելիս»: Քննադատության սլաքի սուր ծայրն ուղղված էր Անգլիայի դեմ: Հիշեցնելով Ղարաբաղում հայերի կոտորածների ժամանակ տեղի բրիտանական ներկայացուցիչների անտարբեր կեցվածքի մասին՝ հոդվածագիրը շարունակում էր. «Ու մինչև այսօր էլ Անգլիան … անզգա ու խուլ է մնում հայ ժողովրդի ճիչերին, նրա՝ մահվան տագնապի մեջ գալարվող աղաղակներին»: Այնուհետև քննադատվում էին Ֆրանսիան, Իտալիան և մասնավորապես ԱՄՆ-ը: Վերջինի դեպքում նշվում էր. «Ամերիկան անտես ու տես է լինում, թե ինչպես հայ ծնողներին կոտորում են, բայց հետո զգացվում է. վազում որբերին հավաքում, կերակրում, մեծացնում»: Հոդվածագիրը եզրակացնում էր, որ հայ ժողովուրդը պետք է ապավինի միայն սեփական ուժին ու կորովին[42]: Նշված հոդվածը մեծ արձագանք ունեցավ: Վերջինի հրատարակումից չորս օր անց՝ հոկտեմբերի 21-ին, ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանը ՆԳ նախարար Ս. Արարատյանին հանձնարարեց մամուլի ներկայացուցիչների ժողով հրավիրել և հրահանգել, որ «զգուշանան դաշնակիցների և մասնավորապես Անգլիայի դեմ ուղղված գրու-թյուններ հրատարակելուց»: Վարչապետը նշում էր, որ նման հոդվածները բացասաբար են ազդում ՀՀ պետական շահերի վրա[43]: Այնուամենայնիվ, ՀՀ վարչապետի խուսանավումն ավելորդ էր: Հոկտեմբերի 30-ին Կարսի անկումից հետո Անդրկովկասում բրիտանական զինվորական ներկայացուցիչ, գնդապետ Ստոքսը Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին բացեիբաց հայտարարեց. «Կարծես թե Անտանտը կամ չի կարող, կամ էլ չի ցանկանում օգնել [Հայաստանին]»: Նա խորհուրդ տվեց համաձայնության գալ քեմալականների հետ[44]:

---

[42] *Հառաջ, 17.X.1920, N 227:*

[43] *ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 159, մաս II, թ. 120:*

[44] **Բալիկյան Օ., Էվոյան Վ., Սարգսյան Գ.,** *Թուրքիայի նվաճողական քաղաքականությունը Հայաստանում (Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, N 1, էջ 37):*

Անտանտի տերություններից ՀՀ ղեկավարության և իշխող կուսակցության ունեցած ակնկալիքներն ի դերև ելան:

ՀՀ-ում տպագրվող մամուլի ազատության սահմանափակմանն ուղղված անգլիացիների քայլերից փորձում էին «հետ չմնալ» ԱՄՆ ներկայացուցիչները և մասնավորապես Մերձավոր Արևելքում Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) հայաստանյան առաքելության ղեկավարները: 1919 թ. վերջերին ամերիկացիները դիմել էին ՀՀ ներքին գործերի նախարարությանը՝ պահանջելով մամուլում իրենց վերաբերող տեղեկություններ տպագրելուց առաջ նախապես տեղեկացնել և միայն դրանից հետո հրատարակել: ՀՀ կառավարությունը 1920 թ. հունվարի 5-ի նիստում անդրադարձավ ամերիկացիների «խնդրանքին»՝ արձանագրելով, որ հանրապետու-թյունում գրաքննու-թյունը վերացած է: Ուստի որոշվեց. «խնդրել ՆԳ մ[ինիստր]ին՝ առաջարկել խմբագրություններին անստույգ տեղեկություններ առհա-սարակ և, մասնավորապես, ամերիկացիների և Հայաստանում նոցա ունեցած գործողության մասին չտպել»[45]: Ալեքսանդրապոլում Ամերկոմի ծավալած գործունեությունը քննադատաբար լուսաբանելու պատճառով ռազմաճակատի հրամանատար, գեներալ Մ. Սիլիկյանի կարգադրու-թյամբ 1920 թ. աշնանը դադարեցվեց ՀՅԴ օրգան «Շիրակի աշխատավոր» թերթի հրատարակությունը: Այս կարգադրությունը ստացավ Հ. Օհանջանյանի կառավարության հավանությունը[46]:

Ավելացնենք նաև, որ ՀՀ օրոք մամուլում հրատարակվող տեղեկա-տվության և խոսքի ազատության սահմանափակմանն ուղղված քայլեր էր իրականացնում նաև կառավարող ՀՅԴ կուսակցությունը: Այսպիսի եզրահանգման հնարավորություն մեզ տալիս է հետևյալ փաստը: ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծված Դատական ատյանը (նախագահ՝ Հ. Տեր-Դավթյան) 1920 թ. հունիսի 12-ին կուսակցության շարքերից հեռացրեց Արհեստակցական միությունների միության նախագահ Հ. Ավալյանին, քանի որ վերջինս Երևանում կայացած մայիսմեկյան ցույցի ընթացքում «հակառակ մեր կուսակցության արգելքին, որ ո՛չ բերանացի և ո՛չ գրավոր կերպով չհիշատակվի «Կեցցե՛ Գ Ինտերնացիոնալը» նշանաբանը, Հայկ Ավալյանն անհրաժեշտ աշխատանք չէ թափած այդ ուղղությամբ: Ընդհակառակը, ուզած է, որ մեզ համար խորթ այդ լոզունգը հիշատակվի թերթերու մեջ»[47]: Փաստորեն, իշխող կուսակցությունը ևս մերթընդմերթ մամուլի ազատությունը սահմանափակող գործնական քայլերի էր դիմում:

Այսպիսով, սկզբնաղբյուրների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի առաջին հանրապետության օրոք

---

[45] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրու-թյուններ. 1918-1920 թթ., էջ 371:

[46] **Հակոբյան Ա.,** նշվ. աշխ., էջ 41:

[47] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 18, թ. 10:

իրավական տեսակետից գրաքննություն չկար: Մամուլի նկատմամբ գոյություն ուներ միայն մասնակի հետգրաքննություն: Այդուհանդերձ, ՀՀ-ում մամուլի նկատմամբ փաստացի պետական վերահսկողություն էր իրականացվում: Դա առանձնապես նկատելի էր 1919 թ. գարնանից սկսած: Կարճատև գոյության պատճառով Հայաստանի Հանրապետությունը չհասցրեց մամուլի մասին օրենք ընդունել: Այս ոլորտը կարգավորվում էր Համառուսաստանյան Ժամանակավոր կառավարությունից ժառանգված օրենսդրության հիման վրա:

ГОСУДАРСТВЕННЫЙ КОНТРОЛЬ И ЦЕНЗУРА В СФЕРЕ ПЕРИОДИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (1918-1920 ГГ.)

СУКИАСЯН А. К.

Резюме

В годы Первой Республики Армения армянская периодика курировалась министерством внутренних дел, которое разрешало издание того или иного органа прессы. В Республике Армения вопросы, связанные с периодикой, регулировались на основе законодательства Всероссийского Временного правительства.

Однако с правовой точки зрения в 1918-1920 гг. в отношении периодики цензуры как таковой не было, имели место государственный контроль и частично военная цензура.

STATE CONTROL AND CENSORSHIP OF THE PRESS IN THE REPUBLIC OF ARMENIA (1918-1920)

H. SUKIASYAN

Abstract

In the period of the first Republic of Armenia the press was under the jurisdiction of the Ministry of Internal Affairs. In the name of the Government the Internal Affairs department kept relations with the publishing houses and newspaper editorials giving instructions, authorizing or suspending the publications. Questions concerning the press of the Republic of Armenia were regulated on the basis of the legislation of Russian Temporary Government.

Materials published in the press “cause problems” in the cases when a state or military secret was revealed, or when in political terms they were undesirable for the authorities of the Republic of Armenia and the representatives of the Entente. However, in 1918-1920 there was not a press censorship from the legal point of view. Only a partial military subsequent censorship and state control existed. In was visible particularly from the Spring of 1919.